BYBLOS BANK
ARMENIA

ՔԱՐՏԵՐԻ ԲԼՈԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Ե՞րբ և ինչպե՞ս է պետք բլոկավորել քարտը

Քարտն անհրաժեշտ է անմիջապես բլոկավորել քարտի կորստի կամ զեղծարարության կասկածի դեպքում: Դա կարելի է անել ինքնուրույն՝ առանց Բանկ այցելելու:

Քարտը բլոկավորել կարելի է Byblos Mobile հավելվածի կամ USSD ծառայության միջոցով: Երկու տարբերակներն էլ անվճար են և հասանելի են 24/7 ռեժիմով:

Ինչպե՞ս բլոկավորել քարտը Byblos Mobile հավելվածի միջոցով



1. Մուտք գործել հավելված

2. Անցնել տվյալ քարտի էջը

3. «Ավելին» կոճակի օգնությամբ ընտրել «Քարտի բլոկավորում» հրահանգը

Եվ վերջ, քարտը բլոկավորված է:

Ինչպե՞ս բլոկավորել քարտը USSD ծառայության միջոցով

Ծառայությունն ակտիվացնելու համար Քարտապանը պետք է լրացնի Բանկի կողմից տրամադրված հայտադիմումը՝ նշելով հեռախոսի համարը:

Այնուհետև, ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է.

1. Հեռախոսով հավաքել *116#

2. Ընտրել քարտը, որն ուզում եք բլոկավորել

3. Ընտրել «Քարտի արգելափակում» (Card Blocking) հրահանգը

Եվ վերջ, քարտը բլոկավորված է:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: